# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
04 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 6

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԽՐԱՐՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մնասի <<բ>> կետով.

Կարգադրում եմ.

1.Աշխատանքային պարտականությունները գերազանց կատարելու համար՝Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին խրախուսել 160000/ մեկ հարյուր վաթսուն հազար / ՀՀ դրամով:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

25 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 7

ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Խուրշուդ Քոչարյանի 2020թվականի հունիսի 16-ի դիմումը.

Կարգադրում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին տրամադրել 2020 թվականի ամենամյա արձակուրդը `2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի օգոստոսի 3-ը ներառյալ`24 աշխատանքային օր տևողությամբ/ 20 աշխատանքային օր՝ նվազագույն և 4 աշխատանքային օր՝ լրացուցիչ:

2.Խուրշուդ Քոչարյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի օգոստոսի 4-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

25 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 8

ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Անահիտ Սարգսյանի 2020 թվականի հունիսի 25-ի դիմումը.

Կարգադրում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի <<Արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Սարգսյանին տրամադրել 2020 թվականի ամենամյա արձակուրդը՝ 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի օգոստոսի 4-ը ներառյալ ՝30 աշխատանքային օր տևողությամբ:

2.Ա. Սարգսյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի օգոստոսի 5-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 29

## ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 56 որոշումը և Ռուբեն Հովյանի 2020 թվականի մայիսի 26-ի-ի դիմումը.

Որոշում եմ

1.Քաղաքացի Ռուբեն Հովյանին տալ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 30

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի17-ի թիվ 470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումներով և հիմք ընդունելով Նարեկ Ենոքյանի 2020 թվականի մայիսի 25-ի դիմումը.

Որոշում եմ

1.Օրինականացնել Նարեկ Ենոքյանին պատկանող՝Արմավիրի մարզի Գայ համայնքի Երևանյան փողոց թիվ 46 հասցեում գտնվող շինության արտաքին՝ 2648.13քմ և 163.5 քմ կառուցապատ մակերեսով շինությունը և այն ճանաչել օրինական:

2.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարման ենթակա գումարը կազմում է 9559542/ ինը միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:

3.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու շահերը , կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չի առաջացնում սերվիտուտ և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում:

4.Սույն որոշումից ծագող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 31

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերով, հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 56 որոշումը և Յու . Նիկոյանի 2020 թվականի մայիսի 26-ի դիմումը.

Որոշում եմ.

1.<<Լաս- Պեգաս >> ՍՊԸ-ի տնօրեն Յու. Նիկոյանին տալ հանրային սննդի կազմակերպման և ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման թույլտվություն:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

01 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 32

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ՝ՀԵՍՏԱՊԱՐԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 56 որոշումը և Յու . Նիկոյանի 2020 թվականի մայիսի 26-ի դիմումը.

Որոշում եմ.

1.<<Լաս- Պեգաս>> ՍՊԸ-ի տնօրեն Յու. նիկոյանին տալ Գայ համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի՝ հեստապարային ակումբի գործունեության թույլտվություն:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 33

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 -Ն որոշմամբ , հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 56 որոշումը և Լիաննա Մխիթարյանի 2020 թվականի հունիսի 5-ի դիմումը

Որոշում եմ.

1.Լիաննա Մխիթարյանին տալ շինարարության թույլտվություն ՝ առևտրի սրահ կառուցելու համար:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման լուսապատճենային օրինակն իր հիմքերով ՝ եռօրյա ժամկետում ներկայացնել Արմավիրի մարզպետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

**Հավելված 1**
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի
2020 թվականի հունիսի 10-- ի
N 34 որոշման

**ԿԱԶՄ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավար,
Սեյրան Մարկոսյան
Գայ համայնքի զորահավաքային մարմնի ղեկավար

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի տեղակալ,
Խուրշուդ Քոչարյան
Գայ համայնքի զորահավաքային մարմնի ղեկավարի տեղակալ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Աննա Թադևոսյան
Գայ համայնքի զորահավաքային մարմնի քարտուղար

***Զորահավաքային մարմնի անդամներ***

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
Ժենիկ Բոյաջյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Գայանե Հակոբյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ
Անահիտ Տերտերյան

**Աշխատակազմի քարտուղար՝** **Ա. Թադևոսյան**

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի
2020 թվականի հունիսի 10- ի
N 34 որոշման

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ**

## I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի զորահավաքային մարմնի (այսուհետ Մարմին) կանոնադրության (այսուհետ Կանոնադրություն) նպատակն է սահմանել այդ մարմնի իրավունքներն ու պարտականությունները, ենթակայությունը, խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:

2. Մարմնի իրավասություններն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինը:

3. Մարմինն իր աշխատանքային գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ու անմիջական ղեկավարի որոշումներով, որի վրա վրա անհատական պատասխանատվություն է դրված զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կազմակերպման և իրականացման համար:

## II ՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4. Մարմնի պարտականություններն են խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:

5. Զորահավաքային նախապատրաստության խնդիրներին համապատասխան՝ համայնքում ստեղծված զորաավաքային մարմինը տվյալ բնագավառի զորահավաքային նախապատրաստության մասով իրականացնում է՝

1) զորահավաքային նախապատրաստության համակարգի ղեկավարումը

2) զորահավաքային նախապատրաստության մասով սահմանված զորահավաքային առաջադրանքի կատարումն ապահովող զորահավաքային պլանի մշակման աշխատանքի կազմակերպումը

3) զորահավաքային նախապատրաստության մասով պաշտպանական պատվերի (առաջադրանքի), ինչպես նաև համապատասխան պայմանագրերի կատարումն ապահովող միջոցառումների մշակումը,

4) սահմանված կարգով համայնքապետարանի ղեկավար կազմի, անձնակազմի և մասնագետների ամրագրման աշխատանքների իրականացումը,

5) զորահավաքային նախապատրաստության միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը վերադաս ղեկավարությանը

6) զորահավաքային առաջադրանքների (պատվերների) կատարման և խնդիրների իրագործման ժամանակ զորահավաքային պլանների համաձայն կազմակերպություններից կամ քաղաքացիներից շենքեր, շինություններ, հողամասեր, գույք, տրանսպորտային և այլ նյութական միջոցներ վերցնելու, ինչպես նաև նրանց տնտեսական գործունեության ուղղությունը փոփոխելու ժամանակ համապատասխան ակտեր կազմումը

7) զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի վերաբերյալ գործող օրենսդրության պահանջների կատարումը

8) զորակոչային և զորահավաքային համալրման մարզային ստորաբաժանման հետ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարում փոխգործակցության միջոցով

9) զորահավաքային նախապատրաստության, ինչպես նաև ռազմական դրության պայմաններում համայնքի տարածքում հակահամաճարակային միջոցառումների վերահսկում

10) զորահավաքային նախապատրաստության ոլորտին առնչվող այլ աշխատանքների իրականացում:

6. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում իրականացվում է հետևյալ միջոցառումները

1) քաղաքացիական պաշտպանության պլանների մշակում և մասնակցություն դրանց մշակման աշխատանքներին

2) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի և համայնքի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների քաղաքացիական պաշտպանության գծով ուսուցման կազմակերպում

3) վերադաս կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ժամանակ համապատասխան կապի միջոցով ապահովման աշխատանքների համակարգում և վերահսկում

4) բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարման նկատմամբ վերահսկողություն

5) առևտրի և սննդի նյութատեխնիկական մատակարարման գծով իրականացվող գործառույթների համակարգում և վերահսկում

6) համայնքից տարահանված բնակչությանը, համայնքի վարչական տարածքում գտնվող օբյեկտներին պատկանող անշարժ և շարժական գույքի պահպանման վերահսկողության իարկանացում

7) քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող այլ հարցերի համակարգում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում

7. Մարմինը իրավունք ունի՝

1) առաջարկություններ ներկայացնելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

2) իր իրավասության սահմաններում խորհրդակցություններ հրավիրելու.

3) իր իրավասության սահմաններում համակարգելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումները:

## III ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Մարմնի կառուցվածքը և կազմը որոշվում են՝ ելնելով զորահավաքային նախապատրաստության աշխատանքների բնույթից և ծավալից:

9. Համայնքի զորահավաքային նախապատրաստության աշխատանքների համակարգման նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքապետարանի աշխատակազմում համայնքի ղեկավարի գլխավորությամբ ստեղծվում է համայնքի զորահավաքային մարմին:

10. Մարմնի գաղտնի գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Աշխատակազմի քարտուղար՝** **Ա. Թադևոսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 34

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պաշտպանության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 591 որոշումը՝.

Որոշում եմ

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի զորահավաքային մարմնի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

1) Գայ համայնքի զորահավաքային մարմնի կանոնոդրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 35

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, Գայ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով.

Որոշում եմ.

1.Արմավիրի մարզի Գայ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացնել հսկողություն , որի իրականացումը վերապահել Գայի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Խուրշուդ Քոչարյան

Հանձնաժողովի անդամ՝Աննա Թադևոսյան

Հանձնաժողովի անդամ՝Գայանե Հակոբյան

2.Հսկողություն իրականացնող աշխատակիցներին՝ սույն որոշմամբ նախատեսված հսկողությունն իրականացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում և այդ մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 37

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքում 2020 թվականի հունիսի 22-ին կայացած հողատարածքների վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի արդյունքները.

Որոշում եմ

1.Հաստատել՝ Արմավիրի մարզի Գայ համայնքում 2020 թվականի հունիսի 22-ին կայացած , համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության 0.5935 հա 3-րդ կարգի վարելահողի /ԿԾ 04-033-0016-0009 և գյուղ. նշանակության 0.1109 հա 3-րդ կարգի վարելահողի/ԿԾ 04-033-0016-0007/մրցութային կարգով վարձակալության տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ:

2. Մրցույթում հաղթող ճանաչված Հայկ Վարազդատի Մարգարյանի և Աննա Հռմբերտի Խաչատրյանի հետ կնքել հողամասերի վարձակալության պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 38

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Գայ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 56 որոշումը և Վահան Ազատյանի 2020 թվականի հունիսի 25-ի դիմումը.

Որոշում եմ.

1.Վահան Աշոտի Ազատյանին թույլատրել Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում/ԿԾ 04-033-0225-0043/ իրականացնելու կառույցի քանդման աշխատանքներ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 39

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետով և հիմք ընդունելով Գայ համայնքում 2020 թվականի հուլիսի 8 -ին կայացած հողատարածքների վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի արդյունքները.

Որոշում եմ

1.Հաստատել՝ Արմավիրի մարզի Գայ համայնքում 2020 թվականի հուլիսի 8-ին կայացած , համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության 2.2382 հա վարելահողի /ԿԾ 04-033-0206-0006/ /մրցութային կարգով վարձակալության տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունը՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ:

2. Մրցույթում հաղթող ճանաչված Տաթևիկ Վիկտորի Կամիշյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**